Պ-569-15.04.2020,25.05.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդվածը 1. Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՕ-233-Ն օրենքի(այսուհետ՝օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասում «եւ ավտոբուսները» բառերից հետո լրացնել «ինչպես նաև միկրոավտոբուսները» բառերը, իսկ «տախոգրաֆով» բառից առաջ լրացնել «թվային» բառը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդվածը 1. Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՕ-233-Ն օրենքի(այսուհետ՝օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասում «եւ ավտոբուսները» ~~բառերը փոխարինել «ինչպես նաեւ միջպետական ուղեւորափոխադրումներ իրականացնող 6 ից ավելի նստատեղ ունեցող ավտոտրանսպորտային միջոցները» բառերով~~, բառերից հետո լրացնել «ինչպես նաև միկրոավտոբուսները» բառերը, իսկ «տախոգրաֆով» բառից առաջ լրացնել «թվային» բառը»:

~~**Հոդված 2**. Օրենքի 8-րդ հոդվածում լրացնել նոր՝3-րդ մաս.~~

~~«3. 6-ից ավելի նստատեղ ունեցող ավտոտրանսպորտային միջոցներով միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնելիս փոխադրողը պարտավոր է իրականացնել ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրություն:»~~

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականիս ~~սեպտեմբեր~~ մարտի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔԻ Պ-569-15.04.2020,25.05.2020-ՏՀ-011/1
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Պատգամավոր Արթուր Դալլաքյան	Հոդված 1	Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածում«եւ ավտոբուսները» բառերից հետո լրացնել բառերից հետո լրացնել «ինչպես նաև միկրոավտոբուսները» բառերը,	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	Հոդված 2	Առաջարկվել է հանել նախագծի երկրորդ հոդվածը	Ընդունվել է	Ընդունվել է
Պատգամավոր Արթուր Դալլաքյան	Հոդված 3	Առաջարկվել է «2020» բառը փոխարինել «2021» բառով, իսկ «սեպտեմբեր» բառը փոխարինել «մարտ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է